

ՄԷՏԵԼԵՆ “ՏՈՒՄԵՅԻՆ ԳԻՏՈՒԹԵԼԵՆ”

Ճանաչում և հայագետ Արշակ Մադոյանը, ստեղծել է եւ երուսաղեմում հրատարակել մի ինքնատիպ դասագիրք, որը հասցեագրուած լինելով միջին ու բարձր դասարանների սովորողներին, որոշ կողմերով միաժամանակ ընդհանրացումն է իր միջնադարագետի լայն փորձի ու իմացութեան: Գրախօսուող մատենով մեր սովորողներն ստանում են մի ձեռնարկ, որի կարիքը միշտ էլ եղել է, եւ միայն երկու բացակայող պայման են յետաձգել նրա ստեղծումը պետական շահագրգիռ մօտեցումը եւ մանկավարժ գիտնականի նախաձեռնումը: Գրքի հրատարակութիւնը հնարաւոր է դարձել Ամեն Թորգոմ Պատրիարքի հովանաւորութեամբ:

Գիրքն ունի խորապէս մտածուած համակարգ, ուր նիւթերի հարուստ տեսականին ներդաշնակում է որպէս հայ բազմադարեան մատենագրութիւնը բնութագրող ուրոյն ամբողջութիւն՝ միաժամանակ հանդիսանալով այդ մատենագրութեան ճանաչողութեան բանալին: Հեղինակն ինքը ժլատ “երկու խօսքում”՝ մատնացոյց է անում գրքի ճանաչողական նշանակութիւնը՝ գրելով, որ այն “ծափօր ու սիրելի կը դարձնի հայրենի մշակոյթի մեծ, բայց մինչեւ վերջ չգիտակցուած ու չգնահատուած մի հարստութիւն” (ընդգծումը իմն է - Խ.Վ.):

Ջանց առնելով հայ մշակոյթի բարձր զարգացած բնագաւառներից՝ ճարտարապետութիւնը, երաժշտութիւնը, մանրանկարչութիւնը, որոնցով եւս մեր ժողովուրդը իր կարեւոր ներդրումն է կատարել համաշխարհային մշակոյթի գանձարանը, այս գրքում արժեւորել է գերազանցապէս գրականութիւնը, սակայն ոչ աւանդական ձեւերով: Այն ոչ գրականութեան զարգացման ողջ ժամանակագրութիւնն է բերում եւ ոչ էլ այդ զարգացման համակարգուած ուսումնասիրութիւնն է: Միւս կողմից՝ այն գրականութեան ընտրանիով չի սահմանափակում՝ համառօտ կենսագրական ու ստեղծագործական բնութագրումներով:

Կառուցուածքով ու նիւթերի կազմով գիրքը լիովին ինքնօրինակ է: Այստեղ ընդգրկուած հարստութիւնը մատենագրական լինելով՝ բուն գրականութիւնից բացի ընդգրկում է հոգեւոր գործունէութեան այլեւայլ ոլորտներ, որոնք, ի վերջոյ, այլ բան չեն, քան գրականութիւնը բովանդակաւորող, հարստացնող շերտեր: Այսպիսով մի պերճ բազմազանութիւն է ներդաշնակում, որը հայ ժողովրդի զարմանալի հարուստ աշխարհաճանաչողութեան, նրա ստեղծագործ հետաքրքրութիւնների ու կարողութիւնների համակողմանիութեան, նրա լայնահուն աշխարհայեացքի մասին է վկայում:

Երբ գիրքը համեմատում ենք մեզանում եղած (ինարկէ, եւ սփիւղում) համաման երեւոյթներին, նրա ինքնատիպութիւնը իսկոյն աչքի է ընկնում: Այստեղ գրականութեան մեծերը ներկայացւում են միջնադարի գեղարուեստական մտածողութեան արեւ է ճիւղ, ստեղծագործական տեսակ արմատաւորելու կամ զարգացման նոր փուլ, աստիճան նշանաւորելու անհրաժեշտութեամբ: Այսպէս է ներկայացւում Բէ չափածոն իր տեսակներով, Բէ համապատասխանաբար, արձակը եւ Բէ այս հիմնական ոլորտից (գրականութիւնից) դուրս հոգեւոր սննդի այլեւայլ տեսակներ: Ասենք, որ նիւթերի ընդգրկումն անգամ այս շրջանակներից է վերանում՝ ինարկէ, դարձեալ պայմանաւորուած հոգեւոր ճանաչողութեան անհրաժեշտութեամբ:

Նախապատուելով հանդերձ գրական նիւթերը, բայց եւ անհրաժեշտ տեղ տալով ընդհանուր մշակութաբանական, այսպէս ասած՝ օժանդակ նիւթերին, հեղինակն ստեղծել է հայ մատենագրութեան ընդհանուր ճանաչողութեան դաշտ, որն ինքը “գրականութեան համապատասխան ընդհանրութիւն” է անուանում, եւ որի հիմամբ էլ տրուել է գրքի երկրորդ՝ գիտական անուանումը՝ “Ներածութիւն հայ մատենագրութեան”:

Նիւթերի այս երկու խմբերից գլխաւորների՝ ըստ ժամանակագրութեան մատուցումը ժողովրդի հոգեւոր կարողութիւնների ճանաչման ընթացքին հետեւողականութիւն է հաղորդում, իսկ օժանդակների ներհիւսումը խորացնում է այդ ճանաչողութեան համապատկերը: Այս հոգեւոր հարստութեան ուսուցման նպատակաւորութեամբ է թելադրուել նիւթերի տրամաբանական յաջորդականութիւնը, որը, ասես, ընթերցողին հոգեւոր ճամբորդութեան է առաջնորդում՝ պատմութեան խորքերից դէպի նոր ժամանակները:

Գրախօսուող մատենի ծնունդը տարիների պատմութիւն ունի: Նրա յղացման ազդակները հաւանաբար ծագել են “Ոսկեփորիկ”¹ ժողովածուն ստեղծելու օրերին: Տարիներ անց հայագէտը նորից՝ զուտ ուսումնական նպատակներով (միջնադարեան հայ բանաստեղծութեան եւ արձակի՝՝ ըրեստոմատիաներ կազմելիս) դիտարկել է նիւթերը, իսկ “Հայ դասական քնարերգութեան”² երկհատորեակը կազմելիս վերստին չափել է հայ ժողովրդի՝ գոյրան երգերից մինչեւ Սայաթ-Նովա երկնած հոգեւոր հարստութիւնը: Աշխատանքներ են սրանք, որ գիտնականին մղել ու պարտաւորեցրել են՝ գտնել այդ հոգեւոր գանձերի նախնական, ամենաընդհանուր ճանաչողութեամբ օժտելու գիտամեկավարական լուծումը եւ այդպիսով ծածկել մեր հանրակրթական դպրոցների ծրագրերում եղած մի էական բաց: Այս համոզումով էլ նա տասնամեակներ առաջ իր ապագայ գրքի նիւթերով թղթակրցելով պարբերական մամուլին (“Կանչ”, “Աղբիւր”, “Հայրենիքի ձայն”, “Երեսնի համալսարան” եւ այլն), Բէ գիրքն ստեղծելու առաջին քայլերն է արել, Բէ միաժամանակ, իր ապագայ ձեռնարկի նիւթերի իւրօրինակ փորձարկումը: Ինարկէ, այդ նիւթերը, ինչպէս նոյն օրերին ամեն մի արժանա-

¹ “Ոսկեփորիկ” /Նմուշներ հայ հին եւ միջնադարեան արձակից/, կազմեցին՝ Ա. Մադոյան եւ Վ. Ներսիսեան, Երեւան, 1977:

² “Հայոց հին եւ միջնադարեան բանաստեղծութեան քննստումատիւ”, կազմեցին՝ Ա. Մադոյան, Գ. Գ. Անանեան, Ե., 1979: “Հայոց հին եւ միջնադարեան արձակի ըրեստոմատիւ”, կազմեցին՝ Վ. Ներսիսեան եւ Ա. Մադոյան, Ե., 1981:

³ “Հայ դասական քնարերգութիւն”, կազմեցին եւ ծանօթագրեցին՝ Լ. Մկրտչեան, Ա. Մադոյան և Վ. Ն., 1981, Բ. Բ., 1982:

ւոր խօսք միաժամանակ մամուլում ապագայնացնող էջերի մէջ հայի տոհմիկ գգայութիւն ու մտածողութիւն են բերել եւ ազգային-հոգեւոր ինքնանաճողութիւն դաստիարակել:

Հաւաք ու համակարգում վիճակում ահա դրանք կազմել են հիշտ այն գիրքը, որն այսօրուայ դպրոցական միջին ու բարձր դասարանցիների միտքը կր հարստացնի ազգային հոգեւոր գանձերի բազմեանգ զեղեցկութիւններով, այն գիրքը, որի առկայութեան դէպքում հայ մեծ բանաստեղծը չէր դժգոհի կրթական հաստատութեան մէջ “տոհմային գիտութեան” անբաւարար դրուածքից: Ժամանակին, Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանում ուսման կազմակերպումից դժգոհելով, Դ. Վարուժանը հետեւեալ էական բացն է նկատել. “...ցաւով կ’ըսեմ, թէ հոն բոլորովին տոհմային գիտութիւնը երեսէ ձգուած է”:

Այս հայացքով գիրքը դիտելիս՝ միանգամայն տեսնելի է դառնում, որ մեր հանրակրթական դպրոցի ուսումնական ծրագրերից մինչեւ այժմ դուրս է մնացել ընդհանուր զարգացման եւ ազգային-հոգեւոր ինքնանաճան ման իր կրկնակի դերով մի առարկայ: Եւ խորապէս տրամաբանական է թւում, որ այս նպատակին ծառայող, անհրաժեշտ ու նուագագոյն այն գիտելիքներն է բերում գրախօսուող գիրքը, որոնք պարտադիր են իւրաքանչիւր դպրոցաւարտի, իւրաքանչիւր հայ քաղաքացիի նրանց կրթական ու զարգացման մակարդակը, եւ բանի որ դպրոցից յետոյ որեւէ մասնագիտութիւն ձեռք բերելիս (չհաշուած հայագիտական մասնագիտացումները) նրանց ազգային, յատկապէս հայ հին ու միջնադարեան հոգեւոր ճանաչողութեան վրայ նոր բան չի աւելանայ, ապա ստացած գիտելիքներն այդ ուղղութեամբ կդառնան վնասող: Այս ինքնանաճողութիւնն էր Վարուժանը անուանում “տոհմային գիտութիւն”:

Ամէն ժողովրդի համար ահող սերունդներին ազգային ինքնանաճողութեամբ զինելը կենսական խնդիր է, գիտակից քաղաքացի ունենալու պայման: Մի բան, որի կարիքը մեր ժողովուրդը մի փոքր աւելի ունի. նրա զաւակները աւելի շատ են ենթարկւում հայրենի հողը բողբոջելու փորձութեանը...

Հետաքրքիր է, որ անգամ հայագիտական բարձրագոյն կրթութիւն ստանալիս՝ սուր կերպով զգացում է միջնակարգի ստեղծած հիմքի անբաւարարութիւնը՝ հայ հին ու միջնադարեան մշակույթը իւրացնելու ուղղութեամբ: Այս դէպքում եւս իրեն մի խոշոր մշակութային ընդհանուր համապատկեր, գիրքը, տպաւորիչ գծերով ներկայացնելով ու բնութագրելով հայ միջնադարի հոգեւոր կեանքը, տալով համապատասխան պատկերացումներ, կհանդիսանայ այն անհրաժեշտ հիմքը, որով միայն կարելի կլինի լիապէս յուսալ մեր ազգային մշակույթի այդ հարստութեան ամբողջական, համակարգում իւրացումը:

Գրքի աղբիւրները խիստ բազմազան են՝ ընդգրկելով հայ մատենագրութեան գրեթէ բոլոր՝ հոգեւոր ճանաչման առումով, բնորոշ երեւոյթներն ու գոյները: Նիւթերն առհասարակ հետաքրքրաշարժ են, գրաւիչ ու խորիմաստ: Իւրաքանչիւր յօդուածում ընթերցողի իմաստութիւնը սնող գիտելիքների հարստութիւն ստեղծելիս՝ հեղինակը գործիմացօրէն օգտագործում է այդ գիտելիքների ներքին աղբիւրները: Արդիւնքում ստացւում է փոխառնչուող հարցերի ու գիտելիքների հարուստ համակարգ:

Նիւթերի ընտրութիւնն ու կառուցումը այնքան բնական են, որ թւում է՝ մշակուած քարերի ցրոցը դիտող վարպետ կառուցողի պէս գիտնականն էլ ընտրել, գնահատել է արդէն պատրաստ նիւթերի տեղը իր ցանկալի կառուցում... Այսուհանդերձ մեր մէջ բնաւ չի բուլանում այն համոզումը, թէ իւրաքանչիւր յօդուածի փաստանիւթը նա սեփական աչքերով է աչքերով սկզբնաղբիւրում, անկախ նրանից ամէն կոնկրետ նիւթ ուրիշների կողմից մշակուել, կամ ինչ չափով է մշակուել... Ամենայայտնի բեմաներն ու նիւթերը գրքում ներկայացւում են նոր իմաստաւորմամբ, նոր ուղղուածութեամբ, որոնցով էլ դառնում են նոր ու բարձր: Ամէն նիւթ հոգեւոր նոր կողմ, նոր երեւոյթ է բերում, ներհիւսում միւսներին՝ ընդլայնելով հայ միջնադարի հոգեւոր երկունքի մեծութեան համայնապատկերը՝ կազմելով մի ներդաշնակ ամբողջութիւն:

Հայկի կոռու մասին՝ թատերաբեմում հայ ժողովրդի յայտնութեան առասպելի տպաւորիչ վերլուծումին յաջորդող յօդուածները հարուստ տեսականին կարելի է հետեւեալ խմբաւորման ենթարկել: Յօդուածներն նուիրում մեր ազգային յանրապետական արժէքներին՝ հայոց լեզուին, հայրենի հողին, Մեսրոպեան աշուրբեցիին... Թեմատիկ խորհրդածութիւններ՝ քաղուած ժողովրդի յարատեւման դասերից՝ “Կարեւորը մարդկային արժանիքներն են”, “Յարատեւման խորհուրդը”, “Ինչպիսին պիտի լինի երկրի ղեկավարը”, “Գիր ու գրականութեան նկատմամբ մեծագոյն յարգանքը” եւ այլն (միշտ իմաստաւորում հայ միջնադարի մեծարժէք նիւթերով), յօդուածներ, որ ներկայացնում են մեծ հայորդիներին, բնութագրում նրանց անմահ գործը՝ Մեսրոպ Մաշտոցի, Ամանիա Շիրակացու, Յովհաննէս սարկաւազ իմաստասերի, Ներսէս Շնորհալու, Ֆրիկի, Կոստանդին Երզնկացու եւ ուրիշների, այդպէս նաեւ՝ միջնադարեան բանաստեղծական տեսակներից իւրաքանչիւրին, նոյնը՝ արձակ փոքրածաւալ ձեւերից իւրաքանչիւրին, սրբախօսութեանը՝ վարքագրութեան ու վկայաբանութեան իր գոյգ տեսակներով, ինչպէս եւ օժանդակ գիտելիքների նուիրում վերլուծումներ:

Ինչպիսի իմաստուն դաս են ձեւաւորում գրքի առաջին նիւթերից հետեւեալները՝ “Հող հարազատ” եւ “Արշակ Շապուհ”։ Իմացական բարձր լիցքեր ունեն գրքի նիւթերի մեծ մասը, մասնաւորապէս մշակույթի մեծ գործիչներին ներկայացնող սեղմ բնութագրերը: Ոչ մի վերացական գնահատական ու մեծարում: Որպէս կայուն պայման խօսում են իրենք՝ փաստերը, միշտ այնպիսի եղանակով, որ ամբողջ մեծութեամբ ցուցադրուեն մշակույթի երախտաւորները: Այսպէս՝ սկսած Մեսրոպ Մաշտոցից, բոլոր նրանց, որոնք անձն ու գործը կարեւորուել են գրքի ճանաչողական ուղղուածութեամբ:

Աշակերտի միտքը սնելու իմաստով բացառիկ յագեցումն է Մեսրոպ Մաշտոցի գործը լուսաբանող յօդուածը, ուր ծամծմուած ու սովորական ոչինչ չկայ: Շնորհիւ ինքնատիպ շարադրանքի՝ յայտնի գիտելիքներն անգամ Բարձուրեամբ են հնչում: Այսպէս է ներկայացւում եւ Սիմէոն Լեհացին՝ երկրից դուրս սփռուած հայ հատուածների ազգային գոյապայքարի սքանչելի մարտիկ, մշակոյթի եւ ոգու անկկուն նուիրեալ: Նա լեհահայ գաղութի ազգային դիմագծի պահպանման նախանձախնդիր է: Այս բեմալուծ նրա երկը, հայութեան համար մշտական ողբերգութեան մրմուռն արտայայտելով, միաժամանակ նշուել է բոլոր ժամանակների բորոսովիչներին (վերջինս լեհահայ գաղութի ուժացման սեւադէմ գործիչն է):

Սիմէոն Լեհացու անձի բնութագիրը, որ խորապէս դաստիարակչական է, Ա. Մադոյեանը դուրս է բերել նրա գլխաւոր երկից՝ “Ուղեգրութիւնից”։ “Սիմէոնը,- գրում է նա,- մեծ սիրտ ունի, լայնախոն է, օժտուած է սուր դիտողականութեամբ, ճշակով, զուարեամիտ է, կարեւոր է համարում իր ամէն խօսքի հաւաստիութիւնը”։ “Սիմէոն Լեհացի” յօդուածին յաջորդում է “Պապի ամառանոցը”՝ հատուածը, որը միայն բաւական է համոզուելու, որ Լեհացին խոշոր գրող է եւ ուղեգրութեան ձեւով հրաշալի գրական երկ է ստեղծել։

Ստեղծագործող անհատ, մշակոյթի բնագաւառ, երեւոյթ կամ գիտական խնդիր բնութագրելիս հեղինակը հաւատարիմ է մնում գիտամանկավարժական իր սկզբունքին միշտ լինել միաժամանակ պարզ, ստուգապատում եւ համոզիչ։ Նուրբ դիտումներով ու վերլուծումներով նա երեւան է բերում նիւթերի համապատասխան (գեղագիտական, ճանաչողական, գիտական, մանկավարժական-դաստիարակչական եւ այլն) արժանիքները եւ այսպիսով, պատճառաբանում տրուող գնահատականներն ու բխեցնող հետեւութիւնները։ Բաւարարուեմք մի օրինակով։ Չորս էջի չհասնող մի յօդուածում ընդհանուր գծերով ներկայացուել է ԺԳ դարի խոշորագոյն բանաստեղծ Ֆրիկը։ Սակայն այդ սեղմ ընդհանրութեան մէջ էլ եականք աւտուած է տպաւորիչ կերպով։

Բնորոշ խօսքի շնորհիւ նոյն յստակութեամբ ենք ճանաչում նաեւ մշակութային երախտաւորներին, որոնց մասին խօսւում է միջնորդաբար, որեւէ նիւթի կապակցութեամբ։ Այսպէս՝ գիտնական եւ պետական գործիչ Վահրամ Բաբունու մասին խօսւում է մի առիթով /Ինչպիսին պիտի լինի երկրի ղեկավարը/, բայց այդ առիթն էլ բաւական է եղել նրա անհատականութիւնն ընթերցողի յիշողութեան մէջ դրոշմելու՝ իբրեւ բարձր իմաստութիւն ու գեղեցկութիւն։ Նոյնը կարելի է ասել Յովհաննէս Պլուզ երգնկացու կապակցութեամբ։ Հենց միայն “Մեսրոպեան աշուրեն” յօդուածում Ատաբէյ Սիւնեցուց բերուած բացատրութիւնները բաւական են այս նուիրեալի անունը ծանօթ ու պիւրելի դառնալու համար։ Ժ դարի մտածող Մեսրոպ Վայցոճորեցու գործի “Ներսէս Պարբէի պատմութեան” առիթով խօսք է բացւում Հայաստանի քաղաքական հեռանկարների մասին։ Աշակերտի մտաւոր հնարաւորութիւնների տեսակետից բարդ թեմա, բայց այս դեպքում եւս նիւթը պարզ է ու մատչելի։ Որովհետեւ այստեղ էլ խօսքը խառնաւում է կոնկրետ փաստանիւթին ու հետաքրքիր մատուցում։ Աշակերտութեան մէջ քաղաքական մտածողութիւն, քաղաքացիութիւն արմատաւորելու ուղղութեամբ անչափ կարեւոր են Վայցոճորեցու երկի հետագայ ճակատագրի հետ կապուած փաստական յիշատակումները՝ սկսած նոյն Ժ դարից մինչեւ ԺԸ դարի հնդկահայ լուսաւորիչները։

Որոշ նիւթերի վերաբերեալ ուսուցողական շարադրանքները կարող էին չոր լինել, մինչեւ իսկ՝ ձանձրալի, բայց մատուցման գտնուած եղանակով դրանք դարձել են հետաքրքիր, անգամ՝ գրաւիչ։ Այսպէս են, օրինակ. “Չափ եւ յանգ”, “Ձեռագիր, գրիչ, գիր, գրանիւթ” եւ այլ յօդուածներ։ Սրանցից առաջինը ուսուցողական շարադրանքի բրետմատիական նմուշ կարելի է համարել։ Պէտք է տեսնել, թէ ինչպէս “չոր” բեմայի մեկնութեան ընթացքը գնալով աւելի հետաքրքիր է դառնում եւ յանգում... գրաւիչ ժամանցի։

“Ձեռագիր, գրիչ, գիր, գրանիւթ” յօդուածը պարզում է մեր հին ձեռագրերի հրաշքը, “ծածկագրութիւն”՝ յօդուածը լուծում մատենագրական գաղտնիքների մի նոր բնջուկ հայ միջնադարի մշակոյթի նոր շերտեր ու հարստութիւններ բերող։ “Ժամ ու ժամանակ” յօդուածը եւս հետաքրքիր գիտելիքներ է բերում՝ մի նոր կողմից բնութագրելով հայ մատենագրութիւնը։ Միջնադարի մեր մշակոյթի, նրա քաղաքացիական դասերի մասին խորիմաստ խօսք են բերում բազմաթիւ յօդուածներ։

Մանկավարժական մօտեցումը միայն հեղինակային շարադրանքին չէ յատուկ։ Այն բնորոշ է յօդուածներից յետոյ յաճախ բերուող մատենագրական նմուշների ընտրութեանը եւս։ Բաւարարուեմք մի օրինակով։ “Վարդապետական քերթութիւն” տեսակով վերլուծութեանը յաջորդում է “Գովք խոզի մասի” ոտանաւորը։ Նիւթի հետաքրքիր մատուցման “գաղտնիքներից” հետամուտ ամէն ոք այստեղ կտեսնի, թէ ինչպէս է միջնադարի մարդը վարդապետել՝ ուսուցանելը, դարձրել ժամանցի չափ գրաւիչ ու հանելի։ Մեր առջեւ է առողջապահական մի գողտրիկ ձեռնարկ՝ չափածոյ խօսքով, այսինքն՝ գրաւիչ ձեւով եւ դեռ... համեմուած պայծառ հումորով։

Մերունց դաստիարակչելու հարցում հեղինակը կարեւորում է “հայ ազգային ոգու ամենակնայտ յատկանիշներից մէկը”՝ “յարգանքը ուրիշ ժողովուրդների նկատմամբ”։ “Այս յարգանքը, հանդուրժողութիւնը (կարդում ենք այնուհետեւ) հոգեկան մեծ հարստութիւն ու լայնախոհութիւն են ենթադրում եւ միւս երեսն են դրամի, որն այսօր կոչւում է ինտերնացիոնալիզմ” եւ որը “հայ մարդու ինքնութեան դրսեւորման գաղափարական ակունքներից էր ի սկզբանէ”։

Գրախօսութեան ընթերցողներին հաւաստելու հանար, թէ հոգեւոր ճանաչողութեան այս մատենանք գեղծ լինելով նեղամտութեան կամ անհանդուրժողութեան վնասակար ու կոյր մտայնութիւնից, միաժամանակ սասունցիղաւթեան լուսաւոր աշխարհայեացքի դաստիարակման աղբիւր է,

բերենք ԺԲ-ԺԳ դարերի մտածող Ներսես Լամբրոնացուց քաղուած միտքը,- “Կարելորը մարդկային արժանիքներն են”՝ յօդուածի հիմնադրոյթն է: “Ինձ համար,- գրել է Տաքսոնի եպիսկոպոսը,- հայն այնպէս է, ինչպէս լատիներ, եւ լատիներ՝ ինչպէս հելլենը, եւ հելլենը՝ ինչպէս եգիպտացին, եւ եգիպտացին՝ ինչպէս ասորին”։ Հիմա “ինտերնացիոնալիզմի” հարկադրանքի տարիներ չեն, բայց հայ մտաւորականը չի կարող հպարտօրէն չիսօսել իր ժողովրդի հազարամեակներով բնորոշ երեւոյթի նրա ոգու ասպետականութեան մասին՝ ինչ զին էլ ընթացիկ քաղաքականութեան մէջ այն ունենայ: Ուստի ընդգծենք, որ բոլոր կարգի դասերից վեր ու զատ գլխաւոր մի դաս ունի այս գիրքը՝ մարդ դաստիարակել:

Նիւթերը դիւրամարս են ու հետաքրքիր, քէ լեզուով քէ խօսքով: Ու քէն ամենուր հաշուի են առնուած դպրոցականի մտաւոր կարողութիւնները, սակայն չինք շարադրանքը գրքի հասցեատիրոջ տարիքային սահմանափակման պատճառ չէ: Առկայ է պարզութեան այն բարձր դրսեւորումը, որը բոլոր նման դէպքերում արդիւնք է քէ նպատակի եւ քէ նիւթի ճշգրիտ ու յստակ իմացութեան: Այս պարզութեան հետ՝ ամեն դրուատանքից վեր է նիւթի խտութիւնը, ուր համատեղուել են չափի զգացումն ու պատասխանատւութիւնը: Իրբեւ արդիւնք գիտելիքների հարստութիւնը շարադրանքի բնական հետեւանք է. ոչ մի տեղ փաստերի կաղապարածութիւն, մանաւանդ՝ մատուցման հարկադրանք:

Գրքում օգտագործուած բոլոր չափածոյ քէ արձակ նիւթերը գրաբարից ու միջին հայերէնից աշխարհաբարի է վերածել հեղինակը: Դեպի անհրաժեշտն ունեցած խոր յարգանքով է Ա. Մադոյեանը դիմել նաեւ հայ մշակոյթը գնահատող օտարներից ումանց՝ որոնց “չեզոք գնահատողի” կարծիքները գրքում ուրոյն հարստութիւն են ստեղծում /Գուլիմերոս Վիլքիւրա, Ֆերդինանտ Լուազէ, Ն. Դեպման, Կոնմէս Գալանսոս, Վ. Ռոզով, Վ. Բրիւսով, Կիւք-Ամդրէ Մարսել եւ ուրիշներ/:

Ուշադիր ընթերցողը գրքում անհրաժեշտ որոշ նիւթերի պակաս կը գզայ: Այս պակասը հիմնականում առաջացել է հեղինակից անկախ: Գիրքը տպագրուել է երուսաղէմում, իսկ նիւթերի մի մասը /անգամ մամուլում հրապարակուած/ դուրս է մնացել գրքից: Իհարկէ, հայրենիքում տպագրուելիս այդ բացը կը լրացուի:

Ստեղծուել է մնայուն եւ արժեքաւոր դասագիրք՝ իր կարելոր դերով ու նշանակութեամբ: Գիրքը, որին, կարծում ենք, սպասել են շատերը: Մնում է կատարելութեան հարցը, որ անկեղծ ցանկութիւնների է մղում ընթերցողին:

Պէտք է անհրաժեշտաբար ընդլայնել մշակոյթի տարբեր ոլորտներն ու երեւոյթները ներկայացնող յօդուածների շրջանակները: Առանձին յօդուած նուիրել խոշոր ուսումնական կենտրոններին, գրութեան նշանաւոր ակութեւրին /հռչակաւոր ուսուցչապետներին/, բնական գիտութիւնների գարգացմանը, մատենագրական մեծ կորուստներին եւ այլն: Ընդհանրացնող յօդուածներ կարող են լինել նաեւ նշանաւոր քաղաքիչների, ճարտարապետների, մանրանկարիչների մասին՝ անհրաժեշտ դէպքում առանձին նմուշների վկայակոչումներով եւ միշտ հաւատարիմ գրքի ճանաչողական համակարգին, մանկավարժական եւ ուսուցչական բնոյթին, որպիսով աւելի կ'ընդլայնուի գրքի ճանաչողական հորիզոնը:

Կարծում ենք, որ “Յիշատակագրութիւնից” առաջ մի գողտրիկ յօդուած էլ պիտի գետեղել Մատենադարանի թեմայով: Իսկ կը լինի գիրքն ընդգրկող նիւթերի տրամաբանական ամփոփումը:

Ինչպէս ժամանակին ծնունդ բոլոր լաւ գրքերում, այստեղ եւս ամէն ինչ մտածուած է ու տեղին, որով եւ պայմանաւորուած է գրքի ճանաչողական խոշոր արժեքը: Այն ընթերցողին օժտում է, գիւնում պապենական հոգեւոր անխոցելի գրաճով, ազգային-հոգեւոր անպաշտպանութեան ամէն հնարաւորութիւն կանխելու գործութեամբ: Չմնայած նիւթերի հատուածական բնոյթին՝ գիրքն ամբողջական շարադրանքի ուժ ունի եւ հայ մշակոյթի մի ուրոյն պատմութիւն է, որի իւրացումով հասունացող սերունդները հեռու կը մնան քէ ազգային սահմանափակութեան ախտից եւ քէ կործանարար յոռետեսութիւնից:

Ստեղծուել է կարելոր նշանակութեամբ անփոխարինելի գիրք, դասագիրք, որը պէտք է նաեւ այլ լեզուներով /ռուսերէն, անգլերէն/ թարգմանել՝ ինչպէս օտար բուհերի հայագիտական ամբիոնների ուսանողութեան, նոյնպէս օտարախօս հայերի համար: Հայ հին եւ միջնադարեան հոգեւոր մշակոյթը ուսուցանող այս հետաքրքիր ձեռնարկն աւարտում է “Յիշատակագրութեամբ”, որն անհրաժեշտ տուրք լինելով աւանդոյթին, դարձեալ շեշտ ուսուցողական իմաստ ունի: Կար, իհարկէ, նաեւ այն գրելու բարոյական հարցը, որը Ա. Մադոյեանը նուանել է /աւանդութիւնը յարգելուց զատ/ տոհմիկ մտաւորականի իր անբասիր վարքով, հայագիտութեանը մատուցած երկարամեայ արգասաւոր ծառայութեամբ:

Սիրուած գործին հոգով նուիրուելու արդիւնք է “Խորհուրդ մեծ եւ սքանչելի” գիրքը, այն ցանկալի ու գեղեցիկ երեւոյթներից, ուր նոյնանում են մարդն ու իր գործը:

ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ